

ԱՐՄԵՆ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Յանկացած դեպքում իրավաբանական արդարությունը կառուցված է փոխանակման մոդելով՝ որոշ կարգի հանցանք կատարած անձը ի պատասխան ստանում է հրապարակային իշխանության կողմից ներկայացվող հասարակությունից որոշակի համարժեք, որը միաժամանակ ունի ձևական-իրավաբանական ու սոցիալ-արժեքային նշանակություն:

Այսպիսով, արդարությունը ոչ այնքան ազնվությունն է (սուբյեկտի բարի մտադրությունները), որքան հստակությունը, որոշման օրինականությունը՝ իրավունքի տեսանկյունից:

Առանձնապես անհրաժեշտ է ընդգծել, որ իրավունքից դուրս արդարություն չի կարող լինել, «արդարությունը», ինչպես նաև «հավասարությունը», «ազատությունը» հնարավոր է բացառապես իրավունքի սահմաններում, իրավունքի ձևով՝ որպես արդարության, հավասարության և ազատության նորմատիվ արտացոլում:

Հիմնարարներ – իրավաբանական արդարություն, իրավական արժեք, պայմանագրային հարաբերություններ, հրապարակային իշխանություն, համաշխարհային:

Այդպիսի հիմնային իրավական արժեքի ընկալման բարդությունը, ինչպիսիք է արդարությունը, կապված է նրա հետ, որ այս երևույթի էությունը գրեթե միշտ անըմբռնելի է մնում, և դրա բնույթը սահմանելու բոլոր փորձերը կարող են ճանաչվել միայն մասամբ հաջողված:

Պլատոնն իր սոցիալ-քաղաքական փիլիսոփայության մեջ նկարագրում է արդարությունն իբրև հասարակության վիճակ, որը բխում է աշխատանքի բաշխումից, իբրև հասարակական գործառույթների ճիշտ բաշխում և դրանց անշեղ կատարում, «արդարությունը կայանում է նրանում, որ ամեն մեկն ունենա իրենն ու կատարի նույնպես իրենը», «արդարություն կլինի և արդար կդարձնի պետությունը սեփական գործին հավատարմությունը բոլոր շերտերի մոտ՝ գործարարների, օգնականների ու պահապանների, ընդ որում իրենցից յուրաքանչյուրը կատարելու է այն, ինչն իրեն հատուկ է»¹:

Հռոմեացիներին հայտնի են արդարության երկու տեսակները՝ 1) Արդարություն՝ իբրև կամք (iustitia)՝ անփոփոխ ու մշտական կամք՝ ներկայացնելու յուրաքանչյուրին իր իրավասությունը» (constans et perpetua voluntas ius sum cuiusque tribuend²). 2) Արդարություն՝ իբրև կանոն (aequitas), որը վերագրում է, մի կողմից, ձգտել հռոմեացի քաղաքացիների ընդհանուր բարիքին, իսկ մյուս կողմից, տալ յուրաքանչյուր քաղաքացուն լիարժեք անկախություն իր սուբյեկտիվ իրավունքների ոլորտում³:

Թ. Հոբսը դիտարկում է արդարությունն իբրև գործունեություն (justice)՝ կապելով այն պայմա-

նագրային հարաբերությունների հետ. Հոբսին համաձայն՝ արդարության բնույթը «կայանում է այն պայմանագրերի կատարման մեջ, որոնք ունեն պարտադիր ուժ, սակայն համաձայնագրերի պարտադիր ուժը սկսվում է միայն քաղաքացիական իշխանության սահմանումից՝ բավականաչափ ուժեղ, որպեսզի ստիպի մարդկանց կատարել իրենց պայմանավորվածությունները, ինչի հետ է համընկնում նաև սեփականության սկիզբը»⁴: Հոբսի համար սկզբունքային է հանդիսանում այն հանգամանքը, որ արդարությունը չի կարող կամովի լինել. այն միշտ կրում է հարկադրված բնույթ:

Ջ.Ստ. Միլն իր ուտիլիտարիստական փիլիսոփայության մեջ մեկնաբանում է արդարությունն իբրև օգտակարություն, ավելի ճիշտ՝ իբրև դրա հատուկ դրսևորում, որը չունի հստակ սահմանված բովանդակություն և փոփոխվում է հասարակության պահանջներին համապատասխան. «Արդարություն են անվանում հայտնի բարոյական պահանջները, որոնք, դիտարկվելով իրենց կոլեկտիվության մեջ, բարձրագույն տեղն են զբաղեցնում հասարակական օգտի պահանջների շարքում և ուստի ունեն բարձրագույն պարտադրություն, քան այլ պահանջները: Դա, սակայն, ոչ մի կերպ չի բացառում այդպիսի մասնավոր դեպքի հնարավորությունը, որում որևէ այլ հասարակական պարտավորություն կարող է այնպիսի կարևոր հանդիսանալ, որ առավելություն է ստանում արդարության որևէ ընդհանուր կանոնի նկատմամբ»⁵:

Գ. Սպենսերը նախաձեռնեց արդարության կենսաբանական հիմնավորումը և տեսավ դրա մեջ բնական ընտրության սկզբունքի յուրօրինակ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դրստորում, կենդանի օրգանիզմի կամ կենդանիների ընկերակցության համար կարևոր է, որ գոյատևեն դրա առավել ուժեղ ու առողջ տարրերը, հետևաբար, այդ տարրերից յուրաքանչյուրի գոյության պայմանները պետք է լինեն առավել ևս բարենպաստ, որքան ավելի լավ է այն համապատասխանում ընդհանուրի պահանջներին: Արդարությունը, ըստ Սպենսերի, ունի երեք ձև՝ 1) Արդարություն իբրև զգացմունք, 2) Արդարություն իբրև գաղափար, 3) Արդարություն իբրև բանաձև (բառային կոնստրուկցիա)⁶:

Ժամանակակից մոտեցումներից առավելագույն հեղինակություն է վայելում Ջ. Ռոլֆի արդարության հայեցակարգը, որը նույնպես, հեղինակի ճանաչմամբ, հիմնված է պայմանագրային տեսության մեջ՝ արդարությունն իբրև սոցիալական կազմավորում. դա հասարակական գործերի այնպիսի վիճակ է, որը կմտցնեին մարդիկ՝ նախապես չիմանալով՝ ինչպիսի կարգավիճակային բջիջ է զբաղեցնելու իրենցից յուրաքանչյուրը :

Այս առումով կարևոր է ուշադրություն դարձնել, որ սոցիալական փոխգործության ոչ բոլոր դեպքերը կարող են գնահատվել արդարության տեսակետից: Դասական օրինակները՝ «արդարացի գնահատական», «արդար դատավճիռ», «արդար օրենք», «արդար աշխատանքի վարձատրություն», սակայն ոչ ոք չի ասում «թերթերի արդար ընթերցման», «արդար թեյ ըմպելու», «արդար մեքենա վարելու» և այլնի մասին: Ակնհայտ են սոցիալական երևույթների երկու դասերը. դրանցից մի մասը գնահատելու համար արդարության հասկացությունը կիրառվում է, այլ դեպքերում այն իմաստ չունի:

Եթե փորձենք պարզել՝ ինչ ընդհանուր բան կա իրադարձությունների միջև, որտեղ արդարության հասկացությունն այնուամենայնիվ արդիական է (քննություն, դատավարություն, օրինաստեղծություն, աշխատանքի վարձատրություն և այլն), ապա առաջին հերթին պարզվում է, որ դրանք բոլորը ենթադրում են իշխանության ու ենթակայության առկայություն: Այն մարդիկ, ովքեր միմյանց հետ գտնվում են հորիզոնական հարաբերությունների մեջ, չեն կարող արդար կամ ոչ արդար լինել միմյանց նկատմամբ (առնվազն՝ իրավաբանական առումով): Արդարությունը գոյություն ունի այնտեղ, որտեղ կա կախվածություն՝ լինի դա սոցիալական բարիքների բաշխման գործում կամ այլ անձի ճակատագիրը որոշելու հարցում, ինչում էլ դա արտահայտվեր:

Այսպիսով, արդարության հարաբերությունների առաջին հատկանիշ կարելի է համարել դրանց

ուղղահայաց բնույթը: Սակայն ենթակայների վարքագծի նկատմամբ չի կարելի ընդունել արդարության չափանիշ, իսկ իշխողների վարքագծի նկատմամբ կարելի է. դատապարտյալը չի կարող արդար կամ ոչ արդար լինել դատավորների նկատմամբ, իսկ դատավորը կարող է: Արդարությունը ուժեղների, իշխանություն կրողների առաքինությունն է, և այս իմաստով այդքան էլ հեռու չէր ճշմարտությունից հին հունաստանի սոֆիստ Ֆրասիմախը, երբ պնդում էր, որ արդարությունը այն է, ինչը ձեռնտու է ուժեղագույնին⁸: Այլ բան է, որ արդարությունը կարող է գնահատվել ստորադաս կողմի, ենթակա սուբյեկտի դիրքերից, սակայն նա չի կարող յուրացնել արդարություն, այլ կարող է միայն ակնկալել այն նրանից⁹, ով գտնվում է իր վերևում՝ իշխանություն կրողից :

Այսպիսով, արդարությունը ձեռք է բերում եռակի փոխանակման տեսք, որտեղ մասնակցում են սուբյեկտների երեք տեսակներ՝ այս կամ այն արարքը կատարած անձը, այն անձինք, ում շահերն են շոշափվել, իշխանական սուբյեկտ, ով արձագանքում է կատարված արարքին՝ գնահատական տալով դրան:

Ինչպիսի չափանիշներով է գնահատվում այս հատկանիշի առկայությունը կամ բացակայությունը: Դեպքերի մեծ մասում արդարության տակ հասկանում են արարքի ու դրան արձագանքի միջև որոշակի համապատասխանություն, քննության ժամանակ արդար գնահատական է համարվում այն, որը համարժեք է ուսանողական պատասխանի որակին. արդար օրենք՝ այն, որը համապատասխանում է հասարակության պահանջներին ու ակնկալիքներին, աշխատանքի արդար վարձատրություն՝ այն, որը համարժեք է կատարված աշխատանքի ծավալին ու որակին: Հենց այդ իմաստով է արդարությունը ստանում ձևական-իրավաբանական ամրագրում օրենսդրության սկզբունքի մակարդակում:

Հետևաբար, իրավաբանական տեսակետից արդարության հասկացությունը նշանակում է ոչ այլ ինչ, քան համաչափություն, աղեկվատություն կամ, այլ կերպ ասած, համարժեքություն: Այս իմաստով հիմնավորված է թվում Վ.Մ. Սիրիխի եզրակացությունն այն մասին, որ արդարությունն իրենից ներկայացնում է համարժեքության ընդհանուր սոցիալական սկզբունքի արտահայտման հատուկ բարոյական ձևը («այլագոյությունը»), որն առաջնահերթ նշանակություն ունի փոխանակման հարաբերությունների համակարգում, որն ընկած է ողջ սոցիալական կազմակերպության հիմքում¹⁰:

Արդարության՝ իբրև մարդկային վարքագծի

նկատմամբ արձագանքի հատուկ տեսակի հասկացությունը թույլ է տալիս բնութագրել արդարությունն իբրև երկակի նորմատիվային ռիթմ:

Արդարության ռիթմիկ բնույթը դրսևորվում է երկու ասպեկտներում: Առաջին. ենթադրվում է խիստ որոշակի հերթականության մեջ գտնվող երկու տարրերի առկայությունը: «Համապատասխանություն» հասկացությունը, որը մոտ է «պատասխանատվություն» հասկացությանը, իր հիմքում ունի «պատասխան», այլ կերպ ասած արդարությունը կառուցվում է հարց ու պատասխանի հաղորդակցական սխեմայով: Այն առաջանում է այնտեղ, որտեղ գոյություն ունի այս կամ այլ մարդկային վարքագծին արձագանքելու անհրաժեշտությունը: Այսպիսով, արդար կարող է լինել միայն այն, ինչը տեղի է ունենում կատարված արարքից հետո, իբրև դրա արձագանքը, պատիժը, ինչպես և խրախուսանքը, պետք է վրա հասնի միայն արարքից հետո, այլ ոչ թե նախորդի իրեն, այլապես այն անարդար է լինելու:

Երկրորդ. արդար որոշումը ոչ միայն կատարված որևէ վարքագծային ակտի պատասխան է, այլև ունի այս ակտին համաչափ լինելու հատկություն: Այսպես, Թալիոնի սկզբունքին համապատասխան, համաչափությունը հանգեցվում է լիարժեք համընկնմանը. պատիժն արդար է, երբ այն իր բնույթով համարժեք է հանցագործությանը: Հետա-

գայում համաչափությունը սկսում է պատկերացվել իբրև համարժեքություն:

Յանկացած դեպքում իրավաբանական արդարությունը կառուցված է փոխանակման մոդելով՝ որոշ կարգի հանցանք կատարած անձը ի պատասխան ստանում է հրապարակային իշխանության կողմից ներկայացվող հասարակությունից որոշակի համարժեք, որը միաժամանակ ունի ձևական-իրավաբանական ու սոցիալ-արժեքային նշանակություն:

Այսպիսով, արդարությունը ոչ այնքան ազնվությունն է (սուբյեկտի բարի մտա-դրությունները), որքան հատկությունը, որոշման օրինականությունը՝ իրավունքի տեսանկյունից:

Այս առումով առանձնապես անհրաժեշտ է ընդգծել, որ իրավունքից դուրս արդարություն չի կարող լինել, «արդարությունը», ինչպես նաև «հավասարությունը», «ազատությունը» հնարավոր է բացառապես իրավունքի սահմաններում, իրավունքի ձևով՝ որպես արդարության, հավասարության և ազատության նորմատիվ արտացոլում:

¹ Տե՛ս Ստատ. Платон. Государство // Собрание сочинений. В 3 т. Т.3. Ч. 1. М., 1971. С. 433, 434.

² Տե՛ս Бартошек М. Римское право (понятия, термины, определения). М., 1989. С. 405.

³ Տե՛ս Хвостов В.М. Опыт характеристики понятий “acquitas” и “acquum jus” в римской классической юриспруденции. М., 1895. С. 9.

⁴ Տե՛ս Гоббс Т. Левиафан или Материя, форма и власть государства церковного и гражданского // Сочинения. В 2 т., Т. 2. М., 1991. С. 110-111.

⁵ Տե՛ս Милль Дж.Ст. Утилитаризм. О свободе. СПб., 1866-1869. С. 146.

⁶ Տե՛ս Спенсер Г. Справедливость. СПб., 1898. С. 16- 38.

⁷ Տե՛ս Ролл Дж. Теория справедливости. Новосибирск, 1995. С. 25-30.

⁸ Տե՛ս Платон. Государство. С. 338.

⁹ Տե՛ս Сорокина Ю.В. Актуальные проблемы теории философии права. Курс лекций. М., 2013, С. 166-167.

¹⁰ Մանրամասն տես՝ Сырых В.М. Логические основания общей теории права. Т. 3. Современное правопонимание. М., 2007. С. 419-434.

Армен Шукурян

Аспирант института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Право и справедливость

В любом случае юридическая справедливость построена по модели обмена: человек, который совершил преступление некой категории, в ответ получает определенный эквивалент общественности, предоставленный со стороны публичной власти, которая одновременно имеет формально-юридическое и социально-ценное значение.

Таким образом, с точки зрения права - справедливость не столько честность (добрые намерения субъекта) сколько четкость, законность решения.

Особо надо подчеркнуть, что вне права не может быть справедливости. “Справедливость” так же как и “равенство”, “свобода” возможна исключительно в рамках права, в форме права, как нормативное проявление справедливости, равенства и свободы.

Ключевые слова: юридическая справедливость, правовая ценность, договорные отношения, публичная власть, пропорциональность.

Armen Shukuryan

RA NAS Philosophy, sociology and law institute's postgraduate

SUMMARY

Law and Justice

In any case, the legal justice has been modeled on interchange - a person who has committed a crime of some category, in response receives the equivalent of a certain public provision by public authorities, which also has a formal-legal and socio-valuable significance.

Thus, the justice is not so much honesty /good intentions of the subject's / but clarity, legality of the decision from the point of view of the law.

Especially, it is necessary to emphasize that there cannot be justice out of law. “Justice” as well as “equality”, “freedom” is possible only within the law, in the form of law, as a normative expression of justice, equality and freedom.

Keywords: legal justice, legal value, contractual relations, public authority, proportionality.